«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

_____ Մ.Գ.Մանուչարյան
17 օգոստոսի 2023թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Մերի Հովսեփի Հովսեփյանի «Տնտեսական ճգնաժամերի վաղ ազդանշման հնարավորությունները և դերը ինտեգրացիոն գործընթացներում (ԵԱՏՄ երկրների օրինակով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.06. –«Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Մասնակցում էին՝ Մերի Մանուչարյան՝ *տնտեսագիտության թեկնածու*, Եվգենյա Հակոբյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Ռոբերտ Սարինյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ.*, Աշոտ Մարկոսյան՝ *տնտեսագիտության դոկտոր, պրոֆ.*, Բելլա Գաբրիելյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Գրիգոր Մանուկյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Ստեփան Պապիկյան՝ *տեխնիկ.գիտ.թեկնածու, տ.գ.թ., պրոֆեսոր՝ Գոհար Վարդանյան*:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վերջին տարիներին համաշխարհային տնտեսությունում նկատելի են տնտեսական անկայունությունների և անորոշությունների զգալի կուտակումներ (միշտ չէ, որ դրանք ունենում են տնտեսական սկզբնապատճառ), ինչը նախադրյալներ է ստեղծում տնտեսական ճգնաժամերի առաջացման համար: Գլոբալիզացիայի ներկա փուլում այդ կուտակումների

հետևանքներն էլ ավելի ցայտուն են դարձել, իսկ տարածաշրջանում կամ գլոբալ մակարդակում աճող անկայունությունները անմիջապես խոցելի են դարձնում ինչպես համաշխարհային տնտեսական աճի ապահովումը, այնպես էլ երկրների խմբերի կամ ինտեգրացիոն միավորումների զարգացումը: Համավարակի տարածման, գերտերությունների «առևտրային պատերազմների», ռուս-ուկրաինական հակամարտության և պատժամիջոցների հետևանքներով վերջին տարիներին առաջացել են մատակարարման գլոբալ շղթաների խաթարումներ, վատթարացել համաշխարհային տնտեսական հեռանկարները, փոխարենը ուժեղացել են տնտեսական ռիսկերի ազդեցությունը զարգացումների վրա: Սույն ատենախոսությունը մեկտեղում և ամփոփում է տնտեսական ճգնաժամերի վաղաժամ ազդանշման մոդելների ձևավորման «սերունդները», դրանց բովանդակային տարբերությունները և ընդհանուր միտումները, մեքենայական ուսուցման գործիքակազմի ներդրման հնարավորությունները, ճգնաժամերի ՎԱՀ-երի մշակման էվոլուցիան, դրանց հիմնական մոտեցումներն ու հակասությունները, որոնց խորքային ուսումնասիրությունը կարող է գիտական հենք հանդիսանալ դրանց հետագա զարգացման և ԵԱՏՄ անդամ երկրների վրա տեղայնացնելու համար:

Հետազոտության ընթացքում կիրառվել են գիտաճանաչողական, վիճակագրական, համեմատական վերլուծության, գրաֆիկական մեկնաբանման, էկոնոմետրիկ մոդելավորման, փորձագիտական գնահատման մեթոդներ: Հետազոտության տեսական հիմք են հանդիսացել հայրենական և արտասահմանյան մասնագիտական գրականությունը, ԵԱՏՄ պայմանագրերով սահմանված կարգավորումները, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի և միջազգային այլ կառույցների կողմից հրապարակված զեկույցները, հոդվածները և աշխատանքային փաստաթղթերը: Տեղեկատվական հիմք են հանդիսացել վերոնշյալ մարմինների պաշտոնական կայքերը, դրանցում զետեղված պաշտոնական տեղեկագրերը, վիճակագրական տվյալների բազաները, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ երկրների պաշտոնական վիճակագրական տվյալները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակն է՝ բացահայտելով տարածաշրջանային մակարդակում ճգնաժամերի վաղ ազդանշման հնարավորությունները, և գնահատելով վաղաժամ ազդանշման համակարգի դերը ինտեգրացիոն գործընթացներում՝ մշակել ճգնաժամերի վաղ ազդանշման համակարգ ԵԱՏՄ անդամ երկրների համար: Տվյալ նպատակին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել համաշխարհային տնտեսության, այդ թվում՝ ԵԱՏՄ անդամ երկրների տնտեսական ճգնաժամերի առաջացման հիմնական պատճառները և փոխանցման ուղիները,
- բացահայտել ԵԱՏՄ անդամ երկրներում տնտեսական ճգնաժամերի առաջացման ներքին գործոնները և արտաքին սպառնալիքները,
- ուսումնասիրել տարբեր երկրների և ինտեգրացիոն միավորումների ճգնաժամերի վաղաժամ ազդանշման առաջադեմ մոտեցումները,
- ընտրել և տեղյանացնել և հիմնավորել ԵԱՏՄ անդամ երկրների համար վաղաժամ ազդանշման համակարգի մեթոդաբանությունը, դրա հիման վրա մշակել ԵԱՏՄ երկրների համար վաղաժամ ազդանշման համակարգ,
- բացահայտել տարածաշրջանային մակարդակում տնտեսական հիմնական/նշանակալի ցուցանիշների սահմանման հնարավորությունը և կիրառականությունը,
- ԵԱՏՄ երկրների համար իրականացնել տնտեսական ճգնաժամերի առաջացումը ազդանշող ցուցանիշների շեմային մակարդակների գնահատում,
- գնահատել մշակված վաղ ազդանշման համակարգի ներդրման հնարավորությունները ԵԱՏՄ անդամ երկրներում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրության հիման վրա ստացվել են տեսական, մեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի

շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթ արտացոլող հիմնական դրույթները հետևյալներն.

1. Մշակվել է ԵԱՏՄ անդամ երկրների 1994-2022 թթ. ճգնաժամերի մատրից, որն արտացոլում է միության յուրաքանչյուր երկրում արժութային, բանկային, ֆինանսական, պարտքային և «կտրուկ կանգի» ճգնաժամերի ի հայտ գալու ժամանակագրությունը, դրանց միաժամանակյա դրսևորման և սինխրոնիզացման դեպքերը:
2. Պանելային վեկտոր-ավտորեգրեսիոն (VAR-vector autoregresion) մոդելի միջոցով բացահայտվել է ԵԱՏՄ երկրների տնտեսության վրա ազդող արտաքին տնտեսական շոկերի փոխանցումային մեխանիզմը և գնահատվել դրանց ազդեցությունը Միության տնտեսության հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վրա:
3. ԵԱՏՄ ինտեգրացիոն միավորման համար մշակվել է տնտեսական ճգնաժամերի վաղ ազդանշման միագործոն (ազդանշանային մոտեցում) և բազմագործոն (լոգիթ մոդել) համակարգեր և գնահատվել է դրանց կիրառման հնարավորությունները ինտեգրացիոն գործընթացում:
4. Տնտեսամաթեմատիկական վերլուծության արդյունքում բացահայտվել է ճգնաժամերի բարձր կանխատեսելիություն ապահովող նշանակալի փոփոխականների համախումբը, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ երկրների համար ճգնաժամի առաջացման առավել նշանակալի գործոնները (համաշխարհային տնտեսական աճ և նավթի գներ) և գնահատվել է դրանց ազդեցության չափը:
5. Ճգնաժամերի վաղաժամ ազդանշման համակարգերի մոդելների կիրառման միջոցով գնահատվել է տնտեսական ճգնաժամերը ազդանշող նշանակալի փոփոխականների համար շեմային մակարդակներ, որի հիման վրա հաշվարկվել է նաև ճգնաժամի նախազգուշացման շեմային մեծությունները:
6. Մշակվել է տնտեսական կայունության գնահատման և մշտադիտարկման լրացուցիչ ցուցանիշների համախումբ, որը կարող է կիրառելի լինել ինչպես ինտեգրացիոն միավորման, այնպես էլ անդամ երկրների տնտեսական քաղաքականությունների իրացման գործընթացում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվել է հետազոտվող թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել են հետազոտության գիտական արդյունքները և նորույթները, դրանց տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև դրանց փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության առաջին՝ «Տնտեսական ճգնաժամերը և դրանց վաղաժամ ազդանշման տեսամեթոդական հիմքերը» գլխում ներկայացվել են տնտեսական ճգնաժամերի էությունը և ԵԱՏՄ երկրների տնտեսական անկայունությունների ժամանակագրությունը, Տնտեսական ճգնաժամերի վաղաժամ ազդանշման համակարգերի էությունը, մշակման էվոլուցիան և «սերունդները, ինչպես նաև Տնտեսական ճգնաժամերի վաղաժամ ազդանշման համակարգերի մեթոդական մոտեցումներն ու միջազգային փորձը:

Ատենախոսության երկրորդ՝ «Տնտեսական ցնցումների փոխանցումային մեխանիզմն ու ԵԱՏՄ ճգնաժամերի վաղաժամ ազդանշման համակարգը» գլխում հեղինակն ուսումնասիրել է ԵԱՏՄ անդամ երկրների մակրոտնտեսական կայունությունը արտացոլող ցուցանիշների համախումբը և ԵԱՏՄ երկրների ներքին և արտաքին տնտեսական հաշվեկշռվածության իրավիճակները: Այս գլխի շրջանակներում վեր են հանվել ԵԱՏՄ անդամ երկրների տնտեսություններ ներթափանցող տնտեսական շոկերի աղբյուրները և դրանց փոխանցումային ուղիները, ինչպես նաև էկոնոմետրիկ մոդելների կիրառմամբ իրականացվել է ՎԱՀ բազմագործոն մոդելային վերլուծություն:

Ատենախոսության երրորդ՝ «ԵԱՏՄ վաղաժամ ազդանշման համակարգի արդյունքները և դերը ինտեգրացիոն գործընթացում» վերտառությամբ գլխում ներկայացվել է ինտեգրացիոն միավորումներում ՎԱՀ մոդելների կիրառման հնարավորությունները և առկա իրավիճակը, գնահատվել է ԵԱՏՄ անդամ երկրների

համար ՎԱՀ միագործոն՝ ազդանշանային մոտեցման հնարավորությունները, ստացվել են 18 փոփոխականների համար ճգնաժամերի ազդանշման շեմային մակարդակներ, որոնց հիման վրա դիտարկվել է նաև ամենաբարձր արդյունք ցուցաբերած փոփոխականների վերջին 4 տարիների դինամիկան:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու եզրահանգումներ, որոնք ամփոփված են ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունն իր դրական արժանիքներով հանդերձ զերծ չէ նաև որոշակի թերություններից, որոնցից կարևորել ենք հետևյալները.

1. Աշխատանքի գիտագործնական նշանակությունն էլ ավելի կբարձրանար, եթե հեղինակը դիտարկեր կամ ուսումնասիրեր նաև այնպիսի ռիսկեր, ինչպես օրինակ «To big to fail» ռիսկը: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ներկայումս ԵԱՏՄ անդամ-երկրների մեծ մասում առկա է ֆինանսական միջոցների ներգրավման խնդիր, ապա աշխատանքի գիտական արժեքն էլ ավելի կբարձրանար, եթե հեղինակը իր հետազոտությունում վարկային, արժութային ռիսկերի ուսումնասիրման ընթացքում անդրադառնար նաև բանկերի կողմից ֆինանսական միջոցների ներգրավման առանձնահատկություններին, իրացվելիությանը, դրամական հոսքերին և այլն::
2. Աշխատանքում որպես ռիսկերի փոխանցման մեխանիզմ չեն դիտարկվել ածանցյալ ֆինանսական գործիքները (օրինակ՝ արժութային ՍՎՈՓ-երը),որոնք կարող են հանդես գալ ինչպես ռիսկերի բաշխման, այնպես էլ դրանց կենտրոնացման մեխանիզմն, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել ֆինանսական համակարգի անկայունության:
3. Հեղինակի կողմից վերլուծածած ռեցեսիայի ազդանշման բազմագործոնային Լոգիթ և Պրոբիթ մոդելներում հաշվի չի առնված պետության՝ որպես կարգավորողի կողմից վարվող քաղաքականության ազդեցությունը,

մասնավորապես դրամավարկային, հարկաբյուջետային, որն էլ կարող է վիճակագրորեն նշանակալի ազդեցություն ունենալ վերջնարդյունքի վրա: Նշենք նաև, որ կարգավորողը շատ դեպքերում կարող է հանդես գալ նաև որպես ռիսկի փոխանցման միջոց, ինչով էլ պայմանավորված է մոդելում դրա ներառման կարևորությունն ու նշանակությունը:

4. Աշխատանքի 3.1 ենթահարցում հեղինակի կողմից աղյուսակների տեսքով (աղյուսակ 3.1, 3.2 և այլն) ներկայացված են մի շարք փոփոխականներ, մասնավորապես՝ Կառավարության ընդհանուր եկամուտներ/ՀՆԱ, Կառավարության ընդհանուր բյուջեի հաշվեկշիռ/ՀՆԱ, Կառավարության ընդհանուր ծախսերը/ՀՆԱ, Համախառն ազգային խնայողություններ/ՀՆԱ և այլն, ինչը տարընկալումների է հանգեցնում, քանի որ հստակ ձևակերպված չէ, թե ո՞ր պետության կառավարության մասին է խոսքը կամ համախառն ազգային խնայողություններ ասելով կոնկրետ ո՞ր ազգի տվյալներն են ներկայացված և վերլուծված և այլն:
5. Համաձայն գիտական աշխատանքներին ներկայացվող պահանջներին, տողատակի հղումներում պետք է արտացոլված լինեն կոնկրետ էջեր, որին հղումներ են արված, իսկ գրականության ցանկում պետք է նշված լինի աղբյուրի ընդհանուր ծավալը, ինչը սույն ատենախոսությունում հիմնականում պահպանված չէ (օրինակ՝ գրականության ցանկի 85. 86. 98 և այլ աղբյուրներում): Աշխատանքի 52-րդ էջում ներկայացված 1-ին բանաձևին հղում արված չէ: Տողատակի հղումների 87-րդ հղումը շատ ընդհանուր է և հստակ չի երևում, թե ատենախոսը կոնկրետ որ աղբյուրի հիման վրա է կազմել գծապատկերը:
6. Աշխատանքում առկա են մտքի ձևակերպման, խմբագրական և տեխնիկական բնույթի սխալներ, գրականության ցանկը կանոնակարգված չէ, առկա են հղումներ դասագրքերին և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մերի Հովսեփի Հովսեփյանի «Տնտեսական ճգնաժամերի վաղ ազդանշման հնարավորությունները և դերը ինտեգրացիոն գործընթացներում (ԵԱՏՄ երկրների օրինակով)» թեմայով ատենախոսությունը կարելի է որակել որպես ինքնուրույն հետազոտություն, որի շրջանակներում, բացահայտելով տարածաշրջանային մակարդակում ճգնաժամերի վաղ ազդանշման հնարավորությունները, և գնահատելով վաղաժամ ազդանշման համակարգի դերը ինտեգրացիոն գործընթացներում, հեղինակի կողմից մշակվել է ճգնաժամերի վաղ ազդանշման համակարգ ԵԱՏՄ անդամ երկրների համար: Աշխատանքում տեղ գտած թերությունները չեն ազդում աշխատանքի գիտական արժեքի վրա:

Հեղինակի գիտագործնական ընդհանրացումները, եզրակացություններն ու առաջարկները կարող են կիրառվել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (Այսուհետ՝ ԵՏՀ) կողմից՝ տնտեսական ճգնաժամերի վաղաժամ ազդանշման համակարգի զարգացման և գործնական կիրառության գործընթացներում, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ երկրների ֆինանսների նախարարությունների և կենտրոնական բանկերի, ինչպես նաև տնտեսական քաղաքականություն իրականացնող այլ մարմինների կողմից: Հետազոտության արդյունքները կարող են ուշագրավ լինել նաև ինտեգրացիոն տարբեր միավորումներում տնտեսական ճգնաժամերի վաղաժամ ազդանշման համակարգերի մշակման առումով, ինչպես նաև այս ոլորտում հետազոտություններ իրականացնող մասնագետների համար:

Թեկնածուական ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը, արդյունքները և գիտական նորույթը: Հեղինակի կողմից հրապարակած 7 գիտական հոդվածները համապատասխանում են հետազոտության ուղղվածությանը, դրա խնդիրներին և ունեն բավարար ընդգրկունություն:

Այսպիսով՝ Մերի Հովսեփի Հովսեփյանի «Տնտեսական ճգնաժամերի վաղ ազդանշման հնարավորությունները և դերը ինտեգրացիոն գործընթացներում (ԵԱՏՄ

երկրների օրինակով)» թեմայով ատենախոսության և դրան համատեղ կազմված սեղմագիրն ու թվով 7 հոդվածների հրապարակումները համապատասխանում են ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ աշխատանքի հեղինակն արժանի է Ը.00.06 - «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (17.08.2023թ., արձանագրություն թիվ 8):

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ
գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր **Գ.Վարդանյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ ավագ
գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Գ.Մանուկյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի ՏԻ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր Գ.Վարդանյանի և նույն ինստիտուտի ավագ գիտաշխատող տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Գ.Մանուկյանի ստորագրությունների իսկությունը «հաստատում եմ»՝

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտ. քարտուղար,
տնտեսագիտության թեկնածու, **Ե.Ա.Հակոբյան**
«17» օգոստոսի, 2023թ.

Կ. Տ.